ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2023

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Շփումները և երկխոսությունները ուսումնական գործընթացում

Կատարող՝ Աննա Վարդանյան

Առարկա՝ Ֆրանսերեն

Ուսումնական հաստատություն՝ Լեռնանիստի միջնակարգ դպրոց

ՀՐԱԶԴԱՆ 2023

Բովանդակություն

Ներածություն.....3

Գլուխ **1.** Երկխոսության և շփումների տեխնոլոգիան ուսուցման գործընթացում.....5

1.1 Երկխոսության տեսակները և դրանց բնութագրումը.....9

1.2 Շփման տեսակները և դրանց բնութագրումը.....12

Գլուխ **2.** Ուսուցման գործընթացում ուսումնական երկխոսությունների ու շփումների կազմակերպումը՝որպես դասի արդյունավետության նախապայման.....14

Եզրակացություն.....16

Օգտագործված գրականության ցանկ.....18

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ամեն դարաշրջան իր խնդիրներն ու պահանջներն է թելադրում դպրոցին: Կրթական նոր քաղաքականությամբ կարևորվում է ուսուցչի դերը՝ որպես բովանդակության մշակողի, որպես նորարարի: Կրթակարգը ուսուցչի գործունեության ուղեկիցն է լինելու: Մեծանում է ուսուցչի պատասխանատվությունը: Նա իր մեթոդական պատրաստականությունն ու գիտելիքները հարստացնելու խնդիր ունի: Նա պետք է ապահովի պետության ակնկալիքները հանրակրթությունից: Սերունդները հաջորդում են սերունդներին և փոխվում է նրանց հետաքրքրությունների շրջանակը, նրանց պահանջները, կրթության մասին վերաբերմունքը, փոխվում են իրենք, փոխվում է արժեքային համակարգը: Եվ ուսուցիչները տեղեկատվության հոսքի աճին զուգընթաց սկսում են նոր տեղեկությունները նորովի ուսուցանելը, կյանքում կիրառելի գիտելիքներով ու կարողություններով օժտված անհատ ձևավորելը: Սա է պատճառը, որ ուսուցիչն իր աշխատանքին զուգահեռ պարբերաբար վերապատրաստվելու, մասնագիտական նորություններին և դասավանդման նոր մեթոդներին ու ռազմավարություններին ծանոթանալու հնարավորության կարիք ունի :

ՈՒսուցիչը,որքան էլ հարուստ աշխատանքային փորձ ունենա,երբեք չպետք է բավարարվի ձեռք բերածով:Նա պարտավոր է անընդհատ կատարելագործել ուսուցման մեթոդներն ու հնարները՝ ցանկալի արդյունքի հասնելու համար: Եթե ուսուցիչը նախապես պատկերացնի տվյալ դասարանի հետ անցնելիք ճանապարհի ուղղությունը,ապա կկարողանա հետաքրքիր դարձնել անգամ հաղթահարվելիք արգելքներն ու դժվարությունները:

Թեմայի արդիականությունը–Արդի ժամանակաշրջանում դպրոցի կարևորագույն խնդիրներից է դառնում աշակերտների ճանաչողական հետաքրքրությունների, նրանց ստեղծագործական մտածողության, ինքնուրույն որոշումներ կայացնելու կարողությունների ձևավորումն ու զարգացումը:

Հետազոտության նպատակը –ուսումնասիրել կրտսեր դպրոցականների իմացական կարողությունների և դրանց զարգացման առանձնահատկությունները:Կրթության զարգացման ներկա փուլում ուսուցչին բնորոշ է տեսության և պրակտիկայի մեջ ինչոր նոր բանի ինտեսնիվ որոնումը:Այսօր բավական չէ տիրապետել գիտելիքների, կարողությունների և հմտությունների հանրագումարին, անհրաժեշտ է ուսուցման արդյունավետությունը բարձրացնելու նոր ուղիներ գտնել:Այսօր կիրառվող մեթոդական նորամուծությունները կապված են ուսուցման ինտերակտիվ մեթոդների կիրառման հետ: Ինտերակտիվ ուսուցումն առաջին հերթին ինտերակտիվ ուսուցում է,որի ընթացքում ուսուցիչն ու աշակերտը փոխազդում են

Դասապրոցեսը կազմակերպելիս աշխատում եմ համադրել նոր մոտեցումներն իմ ունեցած և այդ համադրությունը կիրառել դասավանդման ընթացքում ,որպեսզի այն ծառայի երեխաների մտածողության զարգացմանը: Նոր մոտեցումներով անցկացրած դասը դարձնում է հետաքրքիր, աշխույժ և,անշուշտ,ավելի արդյունավետ:Երեխաները մեծ ոգևորությամբ են մասնակցում

դասապրոցեսին,մտքերն արտահայտում են ազատ ու անկաշկանդ,դառնում են ավելի ինքնավստահ:Ես ամեն անգամ զարմանում եմ երեխաների ստեղծագործելու կարողություններին,նրանց հնչեցրած ինքնատիպ ու անսովոր տեսակետների վրա:

Գլուխ 1. Երկխոսության և շփումների տեխնոլոգիան ուսուցման գործընթացում

Կրթության կարևորագույն խնդիրներից է դպրոցականի հետաքրքրություններին համապատասխան ուսումնական գործունեության ձևավորումը/Պետական կրթական չափորոշիչներով ամրագրված/: Դրա մեջ հատկապես կարևորվում են հաղորդակցական կարողությունները:

ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆԸ հատուկ միջավայր է,որտեղ աշակերտները զգում են հանգիստ և հարմարավետ:Ընկերական ողջունելի մթնոլորտում աշակերտները հարստացնում են միմյանց նոր մտքերով,բացահայտում իրենց ստեղծագործական ներուժը և զարգացնում անձամբ:Դասի երկխոսությունը հատուկ հաղորդակցական մթնոլորտ է,որն օգնում է աշակերտին զարգացնել մտավոր և հուզական անհատականության գծերը:

Աշակերտակենտրոն ուսուցման տեխնոլոգիաների շարքում առանձնակի ուշադրության է արժանի ուսումնական երկխոսության տեխնոլոգիան:Վերջին տարիներին ձևավորված ուսուցման հումանացման և հաղորդակցական ուղղվածության միտումները միջանձնային երկխոսությունները մղում են առաջին պլան:Տվյալ տեխնոլոգիայի հիմնական նշանակությունն այն է,որ նմանատիպ հաղորդակցման ընթացքում աշակերտները դասի ժամանակ զանազան միջոցներ են որոնում իրենց մտքերն արտահայտելու,նոր արժեքների ընկալման և ամրակայման համար:Այս իմաստով երկխոսությունը դիտվում է իբրև առանձնահատուկ սոցմշակութային միջավայր, որն ստեղծում է բարենպաստ պայմաններ անձնական նոր փորձ ձեռք բերելու և մի շարք կարծրացած մտքերի վերանայման համար:Հաղորդակցման կարողությունների շարքին են դասվում ուսումնական համագործակցության պլանավորումը,հարցերի առաջադրումը,վեճերի լուծումը և սեփական կարծիքը հիմնավորելու կարողությունը:

Երկխոսությունը դասերի ժամանակ յուրատեսակ դիդակտիկ հաղորդակցական մթնոլորտ է,որն աշակերտին օգնում է ոչ միայն տիրապետել մտածողության երկխոսական միջոցին,այլև ապահովում անդրադարձը ,զարգացնում անձի ինտելեկտուալ և զգայական հատկանիշները/կայուն հետաքրքրություն,դիտողականություն, դասընկերոջ գործունեությունը վերլուծելու կարողություն և երևակայություն/:

Երկխոսություն վարել նշանակում է միասին որոնել ճշմարտությունը:Երկխոսությունը մարդկանց հաղորդակցման հիմնական ձևերից մեկն է:Երկխոսության ընթացքում <<բացահայտվում է>>մարդը,ինչպես ինքն իր համար,այնպես էլ՝ դիմացինի:

Անհնար է պատկերացնել նաև ուսուցման գործընթացն առանց երկխոսությունների: ՈՒսուցման հաջողության կարևոր պայմաններից մեկն էլ Փոխգործունեությունն ու մասնակիցների շփումն է:Սա է պատճառը,որ ուսումնական երկխոսությունը կարելի է համարել ուսուցման կարևոր մեթոդներից մեկը: Բարձր է գնահատվում այն ուսուցիչների կարողությունները,որոնց հաջողվում է կազմակերպել ճանաչողության կոլեկտիվ գործընթացը:Այս դեպքում պարտադրված,ձանձրալի գործունեությունը փոխարինվում է ճանաչողության գրավիչ կոլեկտիվ գործընթացով: ՈՒսուցչի գինանոցում հատուկ տեղ են զբաղեցնում հարցերը:Արդյունավետ են այն հարցերը, որոնց պատասխանելիս աշակերտի մեջ արթնանում է մտածելու ցանկություն:Հաջողվածհարցն աշակերտին խթանում է աշխատելու համագործակցային խմբում:Նշենք նաև,որ նախապատվություն տրվում է այն հարցերին,որոնց կապակցությամբ աշակերտներից պահանջվում են պատասխանի տարբերակներ,նյութի ազատ

ձևափոխման հնարավորություն,ուսումնական առաջադրանքի վերլուծության այնպիսի դիտանկյունների առաջադրում,որոնք առավել մոտ են երեխաներին:Նախընտրելի են բաց հարցերը,որոնք խթանում են մտածողությանը:Հայտնի է,որ բաց հարցերը միանշանակ պատասխան չեն ենթադրում,այլ պահանջում են մեկնաբանություն դատողական աշխատանք:Նմանատիպ հարցերը սովորաբար սկսվում են ինչու,ինչպես բառերով,ինչը ենթադրում է ծավալունև ազատ պատասխաններ:Բաց հարցեր տրվում են լրացուցիչ տեղեկություններ ստանալու կամ զրուցակցի դիրքորոշումը ճշգրտելու նպատակով:

Բաց հարցերը նպաստում են՝

.Ծավալուն,մանրամասն պատասխաններ ստանալուն

.Հարցի վերաբերյալ տարբեր կարծիքների և գնահատականների արտահայտմանը

.Իմացածի ամփոփման ստուգմանը և ճշտմանը:

Երկխոսություն կազմակերպելիս պետք է պահպանվի որոշակի փուլերի հաջորդականություն.հարց առաջադրել, լսել աշակերտին՝չշտապել գնահատել պատասխանը՝լսելով նաև այլ աշակերտների կարծիքները:Առավել օգտակար կլինի քննարկել աշակերտների արտահայտած մտքերը՝ հնարավորինս սրելով դրանց միջև ծագած հակասությունները:Երկխոսության մեջ ընդգրկել բոլոր աշակերտներին:

Երկխոսություն վարելու կանոններն աշակերտների միջավայրում ձևավորվում են աստիճանաբար,համակարգված աշխատանքի ընթացքում:Դրանք կարող են մեծ պաստառի տեսքով ցուցադրել դասարանում:

.Չի կարելի խոսել բոլորով միասին:

.Երկխոսության ընթացքում պետք է նայել զրուցակցի դեմքին:

.Խոսողի մտքերին կարելի է արձագանքել շարժումներով կամ նշաններով:

.Համաձայնելով դիմացինի կարծիքին կամ առարկելով՝ նրա խոսքը պետք է լսել մինչև վերջ:

.Հարկավոր է հարգանք դրսևորել խոսողի նկատմամբ և նրա խոսքը լսել մինչև վերջ:

.Բացառվում են ծաղրանքը,ոչ բարեհաճ ու վիրավորական մեկնաբանությունները:

ՈՒսուցչի՝իբրև ուսումնական երկխոսության ղեկավարի համար ևս նախատեսվում են որոշակի կանոններ:

.Ոչ մի ռեպլիկ առանց պատասխանի չպետք է թողնել:

.ՈՒսումնական երկխոսությանը հարկավոր է տրամադրել խիստ սահմանափակ ժամանակ:

.Անհրաժեշտ է խթանել աշակերտների ակտիվությունը,խրախուսել նրանց կառուցողական մասնակցությունը երկխոսությանը:

.Հարկավոր է ապահովել պայմաններ՝աշակերտների կարծիքների և մտքերի հստակ ու ամբողջական արտահայտման համար:

Լիարժեք երկխոսություն ապահովելու համար դասարանում պետք է տիրի հոգեբանական բարենպաստ մթնոլորտ:Երկխոսության կայացման համար անհրաժեշտ է,որ ուսուցիչը ևս տիրապետի որոշակի կարողությունների,որոնք կարելի է բաժանել երկու խմբի:

Առաջին խմբին դասվում են այն կարողությունները,որոնք անհրաժեշտ են ուսուցչին՝ուսումնական երկխոսության պլանավորման և նախապատրաստման

համար:Դրանցից են.

.ՈՒսումնական նյութի ընտրություն՝աշակերտի սուբյեկտիվ փորձի հաշվառմամբ:

.Քննարկման համար անհրաժեշտ հանգուցային հարցերի առանձնացում:

.ՈՒսուցիչ–աշակերտ և աշակերտ–աշակերտ հաղորդակցման մոդելի/նմուշօրինակ/ նախագծում:

.Երկխոսական փոխգործունեության օժանդակող դիդակտիկ նյութերի ընտրություն:

Կարողությունների մյուս խումբն անհրաժեշտ է երկխոսության բուն ընթացքի համար.

.Աշխատել աշակերտի սուբյեկտիվ փորձի հաշվառումով:

.Խուսափել աշակերտների գործունեության մասին բացասական դատողություններ__ից:

.Ամփոփել ու ընդհանրացնել աշակերտների հայտնած կարծիքները՝ տալով դրանց գիտական բնույթ:

ՈՒսուցման գործընթացում,պետք չէ մոռանալ,որ ուսուցիչը պարտավոր է նահանջել հետին պլան՝ թույլատրելով երեխաներին ասել ամեն ինչ:ՈՒսումնական երկխոսության իրավիճակներում ուսուցչի դերն ավելի է կարևորվում:Սա շփման ոչ միայն ձև, այլև միջոց է,որի ընթացքում կարևորը ոչ թե տեղեկատվության փոխանցումնէ, այլ հիմնախնդրի վերլուծությունը և համապատասխան դատողություններ անելը:

Երկխոսության ընթացքում իրականանում են մարդկային հարաբերությունների ուշագրավ ու յուրօրինակ դրսևորումներ՝փոխադարձ ապրումակցում, փորձի հարստացում և ստեղծագործական համագործակցություն: Աշակերտները տիրապետում են տարբեր մակարդակներով այն վարելու կարողություններին:

Առաջին:Անձնային մակարդակ,երբ երկխոսությունը կայանումէ իբրև շփում սեփական եսի՝ինքն իր և իր բանականության հետ:

Երկրորդ:Միջանձնայինմակարդակ,երբ երկխոսությունընկալվում իբրև որակապես տարբեր արժեհամակարգեր և իմացական դիրքորոշումներ կրողներ փոխգործունեություն/ներ և ուրիշները/:

Երրորդ:Բազմախոսություն:Համաժամանակյա բազմանդամ զրույց,որը կայանում է 5-7հոգուց կազմված փոքր խմբերով՝որևէ հարց քննարկելու նպատակով:

1.1 Երկխոսության տեսակները և դրանց բնութագրումը

Անձնային որակների զարգացման առումով,պայմանավորված երկխոսության դերով, առանձնացվում են երկխոսության հետևյալ տեսակները,որոնք միմյանցից տարբերվում են վստահության, փոխըմբռնման մակարդակներով:

Երկխոսության տեսակները

Անձնային որակների զարգացման առումով,պայմանավորված երկխոսության դերով, առանձնացվում են երկխոսության հետևյալտեսակները,որոնք միմյանցից տարբերվում են վստահության, փոխըմբռնման մակարդակներով.

Դրդապատճառային—Արտացոլում է մասնակիցների հետաքրքրությունը թեմայի, շփման երկխոսական ձևի նկատմամբ:

Քննադատական- Բնութագրում է երկխոսության բովանդակության քննադատաբար իմաստավորումը,ցանկացած խնդրի վարկածային դիտարկումը:

Բախումային- Առանձնանում է հինախնդրի նկատմամբ անձի վիճահարույց վերաբերմունքի հակասություններով:

Ինքնաներկայացման- Անձը ցուցադրում է իրեն՝իր նկարագրին շահեկան դիրքորոշմամբ:

Ինքնավար -Ներքին երկդոսություն,որն արտահայտում է անձի պաշտպանական ռեակցիայի դրսևորումը:

Անդրադարձային-Ցույց է տալիս անձի կարողությունը՝ինքնավերլուծություն կատարելու հարցում:

Ինքնիրացման-Բնութագրվում է անձի ինքնահաստատման, ինքնաբացահայտմանպահերով:

Ստեղծագործական -Առանձնացնում է անձի արժեքային որոնումները:

Հոգևոր-Արտահայտում է խորքային ներթափանցում միմյանց ներաշխարհի մեջ:

Դաս-երկխոսություն կազմակերպելիս հարկավոր է նկատի ունենալ,որ այն կարող է լինել երկու տեսակի՝տեղեկատվական /երբ ընկալման գործընթացի ժամանակ յուրաքանչյուր զուգընկեր ստանում է նոր տեղեկատվություն/ և մեկնողական բնույթի/երբ երկխոսության ընթացքում մտքեր են փոխանակվու,մեկնաբանություն և գնահատականներ են տրվում զույգերից յուրաքանչյուրին հայտնի փաստերի կապակցությամբ/:

Տարրական կրթության ծրագրի ենթակետերից մեկում մասնավորապես ասված է.<<Սովորողը պետք է կարողանա իր սեփական մտքերը հստակ ձևակերպել,ուրիշի մտքերը հասկանալ ու կարևորել,տրամաբանված դատողություններ անել,տարբեր իրավիճակներում արագ կողմնորոշվել,հարցերձևակերպել,բանավիճել>>:

Աշակերտն այս պահանջները կարող է իրացնել միայն փոխգործակցության միջավայրում և մարդկանց հետ շփումներով:Կրտսեր դպրոցական տարիքում հարկավոր է օգնել երեխային՝ տիրապետելու շփման ձևերին,և մասնակցելու ցանկացած երկխոսության,որը ոչ թե սոսկ կենցաղային –իրավիճակային զրույց է,այլ կոնկրետ համատեքստից բխող մտքերի տրամաբանական փոխանակում:

Դեռևս նախադպրոցական տարիքից երեխաները ձեռք են բերում իրենց հասակակիցների հետ շփվելու որոշակի փորձ/հատկապես խաղային գործունեության մեջ/:Սակայնիրանք դժվարանում են որևէերևույթի վերաբերյալ արտահայտել իրենց վերաբերմունքը կամ լսել ու ընդունել խոսակցի կարծիքը:

Առաջին դասարանցիների միջավայրումուսումնականերկխոսություն իրականացնելու կարողությունը պարտավոր է սերմանել ուսուցիչը.ապահովել նրանց միջև շփում և մտքերի պարզ փոփոխանակում՝կիրառելովփոխներգործուն մեթոդներ:

Զրույցի միջոցով հնարավոր է պարզել աշակերի՝ կոնկրետ գիտելիքների յուրացման փաստը:Մինչդեռ կոլեկտիվ ուսուցման ժամանակուսումնական երկխոսության միջոցով նոր գիտելիք է մատուցվում,կատարվում են նոր բացահայտումներ,լուծվում է որևէ ուսումնական խնդիր, հստակեցվում է այդ խնդրի կատարման ֆայլաշարը:

Ժամանակակից պայմաններում երկխոսությունը միայն տեղեկատվության կամ մտքերի պարզ փոխանցում չէ:Այսօր երկխոսությունը մանկավարժի և սովորողի փոխադարձկապնէ,որը պատասխանատու է հանրակրթության ոլորտում սուբյեկտների միջև հարաբերությունների ստեղծման համար:Երկխոսության բնորոշ գիծը նպատակաուղղված գաղափարների,մտքերի,դատողությունների փոխանակումն է ճշմարտությունը որոնելու ճանապարհին:

Պայմանականորեն տարբերակվում է երկխոսության երկու տեսակ՝դրդող և առաջ մղող:

Դրդող երկխոսության միջոցով վերեն հանվում խնդիրը,հարցը,դժվարությունը:Այդ ընթացքում տրվում են հետևյալ բնույթի հարցեր.<<Դուք կարողացա՞ք կատարել առաջադրանքը>>,<<Որտե՞ղ հանդիպեցիք դժվարություն>>,<<Ինչո՞վ էր այս առաջադրանքը նման նախորդին>> և այլն:

Առաջ մղող երկխոսությունն աշակերտներին մղում է դեպի նոր գիտելիքի աղբյուր,գործողությունների նոր ձևերի հայտնաբերում:Հարցեր.<<Ի՞նչ նկատեցիք>>,<<Ի՞նչ կարող եք ասել այս առաջադրանքի վերաբերյալ>>:

Աշակերտները արտահայտվում են :ՈՒսուցիչն ուշադիր լսում է նրանց, նշակետ բռնում հնչած հետաքրքիր տարբերակներից մեկի վրա և զարգացնում այն:

ՈՒսուցիչը պարտավոր է օգնել աշակերտներին՝ինքնուրույն ձեռք բերելու գիտելիքներ ,աշակերտներիհետ միասին լուծելու առաջադրված խնդիրները:Այսինքն՝նա պետք է այնպես կազմակերպի ուսումնական գործընթացը,որ աշակերտը լինի ոչ թե պասիվ ունկնդիր,այլ գործուն և նախաձեռնող մասնակից:[1]

Երկխոսության տարրերի օգնությամբ սովորելը,որը ես օգտագործում եմ դասերի ընթացքում,հնարավորություն է տալիս աշակերտներին ընկալել ուսումնասիրվող նյութը և յուրացնել այն ավելի խոր իմաստաբանական մակարդակում:

ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆԸ հատուկ միջավայր է,որտեղ աշակերտները զգում են հանգիստ և հարմարավետ:Ընկերական ողջունելի մթնոլորտում աշակերտները հարստացնում են միմյանց նոր մտքերով,բացահայտում իրենց ստեղծագործական ներուժը և զարգացնում անձամբ:Դասի երկխոսությունը հատուկ հաղորդակցական մթնոլորտ է,որն օգնում է աշակերտին զարգացնել մտավոր և հուզական անհատականության գծերը: Այդ ընթացքում կազմակերպվում են խոսքի զարգացման ուղղված նպատակային զրույցներ,հարցուպատասխան՝հաշվի առնելով երեխաների տարիքային և անհատական առանձնահատկությունները,հետաքրքրություններն ու խոսքի զարգացման մակարդակը:

Աշակերտակենտրոն ուսուցման տեխնոլոգիաների շարքում առանձնակի ուշադրության է արժանի ուսումնական երկխոսության տեխնոլոգիան:Վերջին տարիներին ձևավորված ուսուցման հումանացման և հաղորդակցական ուղղվածության միտում– ներբմիջանձնային երկխոսությունները մղում են առաջին պլան:

ՈՒսումնական երկխոսության տեխնոլոգիայի հիմնական նշանակությունն այն է,որ նմանատիպ հաղորդակցման ընթացքում աշակերտները դասի ժամանակ զանազան միջոցներ են որոնում իրենց մտքերն արտահայտելու,նոր արժեքների ընկալման և ամրակայմանհամար:Այս իմաստով երկխոսությունը դիտվում է իբրև առանձնահատուկ սոցմշակութային միջավայր, որն ստեղծում է բարենպաստ պայմաններ անձնական նոր փորձ ձեռք բերելու և մի շարք կարծրացած մտքերի վերանայման համար:[2]

1.2 Շփման տեսակները և դրանց բնութագրումը

Շփում (լատիներենից communicāre թարգմանաբար՝ կիսվել)[1], նշանակության փոխանցման գործողություն՝ հասկանալի նշանների կամ սեմիոտիկ կանոնների միջոցով, որը փոխանցվում է մեկ անհատից կամ խմբից մյուս անհատին կամ խմբին :

Շփումը երկու և ավելի մարդկանց համագործակցությունն է, որն ուղղված է փոխադարձ ըմբռնմանը, փոխհարաբերությունների հաստատմանը և զարգացմանը, միմյանց վիճակների, հայացքների և վարքի վրա փոխադարձաբար ազդելուն, ինչպես նաև նրանց համատեղ գործունեության կարգավորմանը: Այն իրենից ներկայացնում է բարդ գործընթաց, որը ծնվում է մարդկանց համատեղ գործունեություն ծավալելու պահանջմունքից և այդ գործունեության ընթացքում՝ այն արդյունավետ դարձնելու համար: Շփման մասնակիցները շփման սուբյեկտներն են, որոնք կարող են լինել ինչպես կենդանիներ, կենդանի օրգանիզմներ, այնպես էլ մարդիկ: Սակայն մարդկանց միջև իրականացվող շփումը տարբերվում է կենդանիների շփումից իր գիտակցվածության աստիճանով, կապակցվածությամբ, նաև այն փաստով, որ կարող է լինել ինչպես ոչ վերբալ, այնպես էլ վերբալ:

Շփման տեսակները դասակարգում են ըստ այն նշանային համակարգերի, որոնք օգտագործվում են շփման ժամանակ: Հիմնական խմբերը, որոնք առանձնացվում են վերբալ և ոչ վերբալ շփումն է: Ոչ վերբալ շփումը ներառում է մի քանի տարատեսակ. կինեստետիկ, պարալինգվիստիկ և էքստրալինգվիստիկ, կոմունիկատիվ գործընթացի

ժամանակա-տարածային կազմակերպում,դ վիզուալ կոնտակտ: Վերբալ շփման ժամանակ որպես նշանային համակարգ և տեղեկատվության կոդավորման միջոց օգտագործվում է խոսքը: Վերբալ շփումը հնարավոր է երկրորդ ազդարարային համակարգի շնորհիվ և բնորոշ է միայն մարդկանց: Վերբալ շփման ժամանակ, անգամ եթե հաղորդակցվողների մոտ գոյություն ունի նշանային համակարգի միևնույն կոդավորման և ապակոդավորման համակարգը, այնուամենայնիվ՝ հնարավոր է շփման գործընթացի խափանում կամ սխալ ընթացք՝ պայմանավորված խոսքի ընկալման յուրահատկություններով:[1] Այդ իսկ պատճառով վերբալ կոմունիկացիան մեծ մասամբ ուղեկցվում է ոչ վերբալ հաղորդակցմամբ: Ոչ վերբալ հաղորդակցման ժամանակ շփման գործիք է դառնում մարդու մարմինը, որն ունի արտահայտչական մեծ պոտենցիալ և տեղեկատվության փոխանցման տարատեսակ միջոցներ, ինչով բացատրվում է այն փաստը, որ տեղեկատվության 60-70%-ը շփման ընթացքում մարդիկ փոխանցում են «մարմնի լեզվի» շնորհիվ: Ոչ վերբալ շփումը կարող է տեղի ունենալ ինչպես գիտակցական, այնպես էլ ենթագիտակցական մակարդակների վրա: Մի դեպքում, կոմունիկատորը կարող է անգիտակցական ազդակներ հղել ռեցիպիենտին, վերջինս էլ անգիտակցականորեն ըմբռնել դրանք, մյուս դեպքում, ոչ վերբալ ինֆորմացիան կարող է գիտակցվել հաղորդակիցներից միայն մեկի կողմից, ինչպես նաև այն կարող է գիտակցվել շփման բոլոր մասնակիցների կողմից: Ոչ վերբալ շփման միջոցներից են ժեստերը, դիմախաղը, պանտոմիմիկան, որոնք օգտագործվում են օպտիկո-կինետիկ նշանների համակարգի շնորհիվ: Սրանց միջոցով արտահայտվում է խոսակցի վերաբերմունքը, հույզերն ու ապրումները, փոխանցվում են որոշակի մտքեր: Օպտիկո-կինետիկ շփման միջոցները ունեն ինչպես պատմա-էվոլյուցիոն, այնպես էլ մշակութային ծագում: Դա ապացուցվում է նրանով, որ գոյություն ունեն տարբեր ազգերի համար թե ընդհանուր, թե տարբեր, հաճախ անգամ հակադիր, իմաստներով շարժումներ և ժեստեր: Նշանների պարալինգվիստիկ և էքստրալինգվիստիկ համակարգերը նույնպես լրացնում են խոսքային շփումը: Պարալինգվիստիկ համակարգը վերաբերում է ձայնի որակին, դիապազոնին, տոնայնությանը, իսկ էքստրալինգվիստիկը՝ խոսքի մեջ ներառված դադարները, հազը, լացը, ծիծաղը, խոսքի տեմպը և այլն: Այս լրացումները շեշտում են տեղեկատվության նշանակալիությունը, դրա իմաստը: Շփման տարածության և տեղի կազմակերպումը նույնպես ազդում է կոմունիկատիվ գործընթացի վրա, կրում է իմաստ և համարվում է հաղորդակցման իրավիճակի բաղկացուցիչ մաս: Դրա մեջ մտնում է, ինչպես վայրը, որտեղ տեղի է ունենում շփումը, այնպես էլ հաղորդակցվողների միջև եղած հեռավորությունը, նրանց տեսքը, նստելու կամ կանգնելու դիրքը: «Աչքերի կոնտակտը» նույնպես հանդես է գալիս որպես նշանային համակարգի կրող: Աչքերի արտահայտության միջոցով փոխանցված տեղեկատվությանը մեծ նշանակություն է տրվում շփման ընթացքում: Նաև որոշ հետազոտողներ ոչ վերբալ հաղորդակցման մեթոդների շարքին են դասում տակտիլ և օլֆակտոր գործոնները, որոնք առկա են լինում շփման ժամանակ, այսինքն՝ հպումները և շրջակա միջավայրի հաճելի և տհաճ հոտերը:[3]

Գլուխ 2. Ուսուցման գործընթացում ուսումնական երկխոսությունների ու շփումների կազմակերպումը՝որպես դասի արդյունավետության նախապայման

Գործնականում օգտագործելով երկխոսության ուսուցման տեխնոլոգիան՝եսհամոզվեցի,որ օպտիմալ մանկավարժական փոխազդեցության հիման վրա կազմակերպված դասը ունի մի շարք առավելություններ:

1.Դասընթացի ընթացքը աշակերտներին պատրաստում է արդյունավետ

աշխատանքի ,ապահովում է ամբողջ դասարանի զբաղվածությունը :

2.Դասի նյութը յուրացվում են բոլոր աշակերտների կողմից:

3.Դասերին տիրում է համագործակցության և համաստեղծման մթնոլորտը:

Երկխոսությունը օգնում է աշակերտներին սովորել լսելմիմյանց,լրացնել տեղեկատվությունը և վերլուծել այն: Իտերակտիվ ուսուցման հիմնական արժեքն այն է,որ այն թույլ է տալիս կառավարել սովորողների ճանաչողական գործունեությունը:Երկխոսության ուսուցումը նպաստում է աշակերտների մոտ նոր տիպի մտածողության ձևավորմանը,դաստիարակելակտիվ,ստեղծագործ,անկախ մտածելու ունակ, որոշումներ կայացնելու համարձակ,աշակերտներիինքնակրթության ձգտմամբ: Ժամանակակից պայմաններում երկխոսությունը միայն տեղեկատվության կամ մտքերի պարզ փոխանցում չէ:Այսօր երկխոսությունը մանկավարժի և սովորողի փոխադարձկապնէ,որը պատասխանատու է հանրակրթության ոլորտում սուբյեկտների միջև հարաբերությունների ստեղծման համար:Երկխոսության բնորոշ գիծը նպատակաուղղված գաղափարների,մտքերի,դատողությունների փոխանակումն է ճշմարտությունը որոնելու ճանապարհին: ՈՒսուցման հաջողության կարևոր պայմաններից մեկն էլ փոխգործունեությունն ու մասնակիցների շփումն է:Սա է պատճառը,որ ուսումնական երկխոսությունը կարելի է համարել ուսուցման կարևոր մեթոդներից մեկը: Բարձր է գնահատվում այն ուսուցիչների կարողությունները,որոնց հաջողվում է կազմակերպել ճանաչողության կոլեկտիվ գործընթացը:Այսանհնար է պատկերացնել նաև ուսուցման գործընթացն առանց երկխոսությունների,որիդեպքում պարտադրված,ձանձրալի գործունեությունը փոխարինվում է ճանաչողության գրավիչ կոլեկտիվ գործընթացով: [5]

ՈՒսուցչի գինանոցում հատուկ տեղ են զբաղեցնում հարցերը:Արդյունավետ են այն հարցերը, որոնց պատասխանելիս աշակերտի մեջ արթնանում է մտածելու ցանկություն:Հաջողվածհարցն աշակերտին խթանում է աշխատելու համագործակցային խմբում: Երկխոսությունը դասերի ժամանակ յուրատեսակ դիդակտիկ հաղորդակցական մթնոլորտ է,որն աշակերտին օգնում է ոչ միայն տիրապետել մտածողության երկխոսականմիջոցին,այլև ապահովում անդրադարձը

,զարգացնում անձի ինտելեկտուալ և զգայական հատկանիշները/կայուն հետաքրքրություն,դիտողականություն, դասընկերոջ գործունեությունը վերլուծելու կարողություն և երևակայություն/:

Երկխոսություն վարել նշանակում է միասին որոնել ճշմարտությունը:Երկխոսությունը մարդկանց հաղորդակցման հիմնական ձևերից մեկն է:Երկխոսության ընթացքում<<բացահայտվում է>>մարդը,ինչպես ինքն իր համար,այնպես էլ՝ դիմացինի[7]:

Եզրակացություն

Նախագծային աշխատանքը հետաքրքիր է, օգտակար և հեռանկարային, եթե ճիշտ է ընտրված թեման՝ հաշվի առնելով սովորողների նախասիրությունները և տարիքային առանձնահատկությունները:

Երկխոսության տարրերի օգնությամբ սովորելը,որը ես օգտագործում եմ դասերի ընթացքում,հնարավորություն է տալիս աշակերտներին ընկալել ուսումնասիրվող նյութը և յուրացնել այն ավելի խոր իմաստաբանական մակարդակում:

Իմ բոլոր դասերին օգտագործում եմ խմբային աշխատանք և ակտիվ երկխոսություն:Աշակերտների հետ միասին ես ակտիվորեն մասնակցում եմ քննարկմանը և,անհրաժեշտության դեպքում,ուղղում և ուղղորդում աշակերտների մտքերը:Միևնույն ժամանակ,ես ինքս նշում եմ,թե ինչպիսի օգնության կարիք ունի այս խումբը,որտեղ հնարավոր է տեղեկությոն ստանալ:Այս աշխատանքը ,ինչպես ինքս նշեցի ,թույլ է տալիս ավելի լավ ճանաչել երեխաներին,հասկանալ,թե ինչպիսի օգնության կարիք ունեն նրանք,սովորեցնում է սովորողների մտքերը ճիշտ ուղղությամբ ուղղել:

Ես եկա այն եզրակացության,որ դասից դաս երեխաներն ավելի լավ են կարողանում արտահայտել իրենց մտքերը,նրանք աստիճանաբար ավելի տեղեկություն են ձեռք բերում տվյալ թեմայի վերաբերյալ:Դասի ընթացքում հարցերը բարձրացնում են աշակերտների մտավոր գործունեությունը ,թույլ են տալիս բոլորին խոսել:Հարցերը խթանում են երեխային մտածել,վերլուշել,ընտրել պատասխանների տարբերակները, ապացուցել,ինչպես նաև հնարավորություն տալ աշակերտներին մասնակցել քննարկմանը:

Վերլուծելով դասերս ,հետևում եմ աշակերտների հետևյալ նվաճումներին.կտարելագործվում զուգընկերոջ համար կրթական նյութը վերարտադրելու,նրան լսելու,նրան բացատրելու ունակություն ,նկատվում է սեփական ,այլ ոչ գրքային օրինակ բերելու միտումով:

Երկխոսությունը օգնում է աշակերտներին սովորել լսել միմյանց,լրացնել տեղեկատվությունը և վերլուծել այն:

Ինտերակտիվ ուսուցման հիմնական արժեքն այն է,որ այն թույլ է տալիս կառավարել սովորողների ճանաչողական գործունեությունը:Երկխոսության ուսուցումը նպաստում է աշակերտների մոտ նոր տիպի մտածողության ձևավորմանը,դաստիարակել ակտիվ,ստեղծագործ,անկախ մտածելու ունակ, որոշումներ կայացնելու համարձակ,աշակերտների ինքնակրթության ձգտմամբ:

- Կարևոր է երեխայի մոտ նախապես ձևավորել որոշակի դիրքորոշում դպրոցական դառնալու, դպրոցում սովորելու նկատմամբ
- Դպրոցում սովորելու համար երեխայից պահաջվում է մտավոր, հուզական և սոցիալական զարգացվածության որոշակի մակարդակ

- գիտական հասկացությունների ձևավորման գործընթացում զարգանում են երեխայի մտածողության բոլոր գործընթացները
- ուսումնական գործընթացը կազմակերպելիս պետք է կիրառել շարժողական խաղեր

Գործնականում օգտագործելով երկխոսության ուսուցման տեխնոլոգիան՝ես համոզվեցի,որ օպտիմալ մանկավարժական փոխազդեցության հիման վրա կազմակերպված դասը ունի մի շարք առավելություններ:

- Դասընթացի ընթացքը աշակերտներին պատրաստում է արդյունավետ աշխատանքի ,ապահովում է ամբողջ դասարանի զբաղվածությունը :
- Դասի նյութը յուրացվում են բոլոր աշակերտների կողմից:
- Դասերին տիրում է համագործակցության և համաստեղծման մթնոլորտը

Օգտագործված գրականության ցանկ

- **Андреева Г.М. Социальная психология. М.: Аспект Пресс, 1997. (ռnեu.)**
- **Мокшанцев Р., Мокшанцева А. Социальная психология. Инфра-М, 2001 (ռnեu.)**
- **Социальная психология. Учебное пособие. Ред. А. Л Журавлев. М.: ПЕР СЭ, 2002. (ռnեu.)**
- **Коломинский Я.Л., Реан А.А. Социальная педагогическая психология–СПб.: ЗАО «Издательство «Питер», 2000**
- **Шумакова Е.В. Воспитательное пространство социальных сетей интернета // Профессиональное образование. Столица. - 2011. - № 6**

- https://pharutyunyanmskham.wordpress.com/2019/04/21/%D5%B0%D5%A1%D5%B2%D5%B8%D6%80%D5%A4%D5%A1%D5%AF%D6%81%D5%B8%D6%82%D5%B4/

- https://www.academia.edu/41885176/%D5%80%D5%A1%D5%B2%D5%B8%D6%80%D5%A4%D5%A1%D5%AF%D6%81%D5%B4%D5%A1%D5%B6_%D5%BF%D5%A5%D5%BD%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6_%D5%A8%D5%B6%D5%A9%D5%A1%D6%81%D5%AB%D5%AF